

ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ

«ՍԱՐՈՅԵԱՆ — ՄԱՐԴԸ, ԳՐՈՂԸ»

Գրեց՝ ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ


Անուանի լուսանկարիչ Փօլ Գալինեանի գրած ու բեմադրած «Սարոյեան — մարդը, գրողը» խորագրով փաստագրական շարժանկարը Փետրուար 7-ին ցուցադրուեց Ուոթերթաունի հայկական գրադարան-թանգարանում՝ արժանանալով ներկաների անվերապահ գնահատանքին: Շարժանկարը ցուցադրում է Միացեալ Նահանգների հայաշատ քաղաքներում:

Ընդհանրապէս ես վերապահութիւն ունեմ Ամերիկայում արտադրուած հայկական շարժանկարների նկատմամբ: Նոյնիսկ դժուարութեամբ եմ ընդունում Հայաստանում բեմադրուած շարժանկարները: Ի՞նչ անենք: Արեւմտեան միջավայրում ապրած լինելով՝ դարձել ենք խստապահանջ՝ արուեստի գործերի նկատմամբ: Հոգեկան մեծ թեթեւութիւն զգացի, երբ Գալինեանի բեմադրած վաւերագրական այս շարժանկարը փարատեց հայկական ֆիլմերի նկատմամբ ունեցած իմ նախապաշարումը: Ամբողջապէս ըմբոշխնեցի այս շարժանկարը՝ վերստին հաղորդակցելով Սարոյեան մարդու եւ գրողի հետ:

Շարժանկարի ամբողջ տեւողութեան ակնբախ է Սարոյեանի հանդէպ Փօլ Գալինեանի տածած սիրոյ խորութիւնը: Սակայն սէրը բաւական չէ: Սիրոյ հետ անհրաժեշտ է նաեւ մասնագիտական մօտեցում գործի նկատմամբ: Անհրաժեշտ է աչք՝ տեսնելու կեանքի ոչ միայն ցցուն բեւեռները, այլ նաեւ փոքրիկ, երբեմն աննշան նրկատուող երեւոյթները: Իրաւ արուեստն արդէն առօրեայ անկարեւոր դէպքերի դրսեւորումն է: Անհրաժեշտ է նաեւ խենդութեան ու տրամադրութեան համադրութիւնը, դրականի ու բացասականի դաշտը: Ու նաեւ դաժան անկեղծութիւնը՝ մէկ առ մէկ բացելու փոթորկալի կեանքի էջերը: Գալինեանը ոչ միայն արուեստագէտ լուսանկարիչ է, այլ նաեւ վաւերական գրող ու բեմադիր:

«Սարոյեան — մարդը, գրողը» շարժանկարի

պատրաստութեան համար Փօլ Գալինեանը մանրամասն ուսումնասիրել է գրողի կեանքն ու գործը, պրպտել հին ու նոր աղբիւրներ, երեւան բերել ընտանեկան հին լուսանկարներ, վերակերտել Սարոյեան ընտանիքի պատմութիւնը Ամերիկայում, ապա օգտագործելով սիրողական բնոյթ կրող շարժանկարային հատուածներ՝ իրա-



Ուիլեմ Սարոյեան
(Լուսանկար՝ Փօլ Գալինեանի)


գործել է փաստագրական այս գործը, որը ամէն կերպ կարող է մրցել նման բնոյթի լաւագոյն շարժանկարների հետ:

Շարժանկարի ամբողջութեանը մեծապէս նըպաստել են հենց իր՝ Գալինեանի լուսանկարները՝ արտացոլելով Սարոյեանի հասուն շրջանի տրամադրութիւնները: Այդ լուսանկարներից մէկը արժանացաւ Միացեալ Նահանգների եւ Խորհրդային Միութեան հաւանութեանը, որով եւ երկու երկիրները համաձայնեցին միասնաբար հրապարակել Սարոյեանի նամականիշը, մի երեւոյթ, որ աննախընթաց է յիշեալ երկիրների պատմութեան մէջ:

Շարժանկարի պատրաստութեան համար Գալինեանը օգտագործել է շարժանկարային արձանագրութիւնը Սարոյեանի անգլերէն եւ հայերէն լեզուով ունեցած ելոյթների, որոնց միջոցով մեծանուն գրողը խօսում է իր ծննդավայր Ֆրեզնոյի, իր ընտանիքի, ապա գրականութեան եւ իր հայկական ինքնութեան մասին: Հանդիսատեսը ապրում է Ֆրեզնոյի հայ կեանքը, մասնակից դառնում Սարոյեանի կեանքի բոլոր փուլերին եւ ազգային հպարտութեամբ համակուծ՝ ի տես Սարոյեանի հոգեկան ու գրական խիզախումների: Շարժանկարում խօսնակ-պատմողն է դերասան Մայք Օհանեան-Քանըզը:

Գալինեանի վաւերագրական այս շարժանկարը լոկ պատմութիւնը չէ Ուիլեմ Սարոյեանի, այլ նաեւ, խորհրդանշորէն, Ամերիկա հաստատուած հայ տարագիրների, հայկական նրկարգրի, մարդկային ողբերգութեան ու մարդկային յարատեւման, մաքառումի ու յաղթութեան, պարտութեան ու հոգեկան վերածնունդի: Սարոյեանը իր մէջ մարմնաւորում է հայութեան անընկճելի ոգին ու ստեղծագործ թռիչքները:

Յատկանշականն այն է, որ Գալինեանը այս շարժանկարը բեմադրել է առանց նախապաշարումների ու յոխորտանքների: Եւ որովհետեւ շարժանկարը զերծ է յաւակնութիւններից, ուստի եւ իր անմիջական անկեղծութիւնն ու հաղորդականութիւնը: Անպատճառ հայ պէտք չէ լինել գնահատելու համար Սարոյեանի համամարդկային քնարը եւ Գալինեանի բեմադրական վարպետութիւնը: Սարոյեանի կեանքն ու արուեստը պատկերանում են հարազատօրէն, շեշտելով այն ճշմարտութիւնը, որը Սարոյեանն էր: Մարդկայնութեան ու սիրոյ երգիչը: Յարտեւ հայը: Այս բոլորի համար շնորհակալ ենք Փօլ Գալինեանին, ինչպէս նաեւ «Համազգային» Պոսթընի մասնաճիւղին:



Փօլ Գալինեան